



**ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ
ԴԱՇՆԱԳԻՐ**

Պարտավորություն՝ տեղական
կայուն էներգիայի համար

www.soglasheniemerov.eu

Հայաստան

Երկրի մասին

Մայրաքաղաքը՝ Երևան

Բնակչությունը՝ 3 մլն 332
հազար

Լեզուն՝ հայերեն

ՀՆԱ (ppp) ընդհանուր/մեկ
շնչի հաշվով՝ 17,827 մլրդ
դոլար /5.390 դոլար

ՀՆԱ (անվանական)
ընդհանուր/մեկ շնչի
հաշվով՝ 9,859 մլրդ
դոլար/2.958 դոլար

Արժույթը՝ հայկական
դրամ (AMD)

Աղբյուր՝ ԱՄՀ (IMF)
(գնահատում 2011թ.)

Հայաստանի էներգիայի ուղղվածությունը մինչև 2020թ.

Հայաստանը կարող է մեծապես խնայել՝ էներգիայի արդյունավետության ոլորտում ներդրումներ կատարելով: 2008թ.-ին Համաշխարհային Բանկի կողմից կատարված հետազոտությունը պարզեց, որ Հայաստանը էներգիայի արդյունավետության ոլորտում արված ներդրումների միջոցով կարող է տարեկան 132 միլիարդ հայկական դրամ (ՀԴ) խնայել, որը մոտավորապես համարժեք է երկրի ՀՆԱ-ի 4.95 տոկոսին: Սա հավասար է մոտավորապես տարեկան 1.21 միլիոն տոննա էներգիայի կամ 1 տերավատտ էլեկտրաէներգիայի և 600 միլիոն խորանարդ մետր բնական գազի խնայողությանը: Բացի արտադրված էներգիայից և ծախսերի կրճատումներից, էներգիայի խնայողությունն այն պայմաններից մեկն է, որն անհրաժեշտ է վերափոխելու Հայաստանի էներգետիկ մատակարարումը և այդպիսով բարելավելու տնտեսական մրցակցությունը: Եվ սրան կարելի է հասնել ավելի քիչ ծախսերով, քան նոր արտադրության հնարավորությունների ոլորտում կատարված ներդրումները կամ ներմուծված էներգիան: Էներգիայի արդյունավետության ոլորտում արվող ներդրումներն ընդհանուր առմամբ տնտեսապես և ֆինանսապես իրագործելի են, հատկապես հանրային սեկտորում արվածներն ընդհանուր առմամբ ներդրումներից ստացված ամենամեծ շահույթն են ապահովում: Հայաստանի՝ մինչև 2020թ. նախատեսված էներգիայի արդյունավետության գործողությունների ծրագիրն առաջարկում է պատշաճ միջոցառումների շարք՝ կապված էներգիայի արդյունավետության բարելավման հետ հետևյալ սեկտորներում. 1. բնակելի շենքեր, 2. հանրային և մասնավոր սպասարկման սեկտոր, 3. արդյունաբերություն 4. տրանսպորտ և 5. գյուղատնտեսություն: Գործողությունների ծրագրի իրականացման ընդհանուր ժամկետը համարվում է տաս տարի՝ 2010թ.-ից մինչև 2020թ.-ը: Կապված այն փաստի հետ, որ մի շարք միջոցառումներ ավելի երկարատև են, օրինակ՝ նկատի ունենալով հարկադիր կատարման ժամանակահատվածները կամ հակազդեցության ժամանակը, մինչև որ շուկայի դերակատարները «պատրաստ» լինեն էներգիայի խնայողության միջոցառումներ կատարել նշված սեկտորներում, գործողությունների ծրագրում պետք է ի նկատի ունենալ միջինից մինչև երկարաժամկետ պլանավորումը:

Դաշնագիրն ստորագրող կողմեր՝ 1

Ծաղկաձոր



**ԵՄԱՅՈՐԱՆԵՐԻ
ԴԱՇՆԱԳԻՐ**

Պարտավորություն՝ տեղական
կայուն էներգիայի համար

www.eumayors.eu

Հայաստան

Աջակցող տեխնոլոգիաներ.

Էներգիայի արդյունավետություն, տարածքային ջեռուցում, ենթակենտրոնական ջեռուցման վերանորոգում, ջերմությունը կարգավորող փականների տեղադրում, պատուհանների և դռների մեկուսացում ցրտից, կաթսայատների վերանորոգում, փողոցային լուսավորության կարգավորում, դրսի պատերի մեկուսացում՝ ցրտից, էլեկտրական հաշվիչների տեղադրում, էլեկտրական կաթսաներ, տաք ջրի և կենտրոնացված ջեռուցման կաթսաներ, ներքին ջրամատակարարման համակարգի խողովակների վերանորոգում, արդյունաբերական գործարանների և կենցաղային էլեկտրական հարմարությունների արդիականացում: Վերականգնվող էներգիա. Բնական գազի բաշխում, կենսաբանական վառելիքներ, կենսաբանական/հորատված գազ, գեոթերմալ, հիդրոէլեկտրակայանից ստացվող, արևային էներգիա, պինդ կենսաբանական նյութ, քամուց ստացված էներգիա: Տրանսպորտ. Քաղաքի հանրային տրանսպորտ, կայուն տրանսպորտ: Ավելի մաքուր արտադրություն. կեղտաջրերի հավաքում և մշակում, կարծր թափոնների կառավարում, կարծր թափոնների հավաքում և մշակում, կեղտաջրերի գտում, վառելիքի փոխարինում, էներգիայի ծախս:

Հայաստանում հնարավոր ֆինանսական կառույցների հակիրճ նկարագրություն

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)
2. Ներդրումների եվրոպական բանկ (EIB)
3. Համաշխարհային էկոլոգիական հիմնադրամ (GEF) (ներառյալ EBRD, UNDP, UNEP, UNIDO, IBRD)
4. Եվրասիական Զարգացման բանկ (ADB)
5. Ասիական զարգացման բանկ (ADB)
6. Համաշխարհային բանկ, IFC Subnational Finance
7. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID)
8. Համաշխարհային բանկ
9. KfW
10. Օգտակար հղումներ և ազգային ֆոնդեր

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)

Դոնորի նկարագրություն

EBRD-ն միջազգային ֆինանսական կառույց է, որն աջակցում է Կենտրոնական եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 29 երկրների ծրագրեր և այս տարածաշրջանի միակ ամենամեծ ներդրողն է: Ուղղակի ֆինանսավորման հիմնական ձևերը, որոնք կարող են տրամադրվել EBRD-ի կողմից՝ փոխառությունները, արժեթղթերը և երաշխիքներն են: EBRD-ի գործողություններն Արևելյան Հարևանության ծրագրերում իրականացվում են Ներդրման եվրոպական բանկի (EIB) և եվրոպական Հանձնաժողովի հետ սերտ համագործակցությամբ:

Իրավունակ սեկտորներ

Ագրոբիզնես, էներգիայի արդյունավետություն, համայնքային և բնապահպանական ենթակառուցվածք, բնական ռեսուրսներ, արտադրողականություն և էներգիա: Ե՛վ հանրային, և՛ մասնավոր սեկտորն իրավունակ են ֆինանսավորման համար:

Աջակցող տեխնոլոգիաներ

Ջրամատակարարում, կեղտաջրերի հավաքում և մշակում, կարծր թափոնների կառավարում, տարածքային ջեռուցում, բնական գազի բաշխում, քաղաքի հանրային տրանսպորտ, կենսաբանական վառելիքներ, կենսաբանական/հորատված գազ, գեոթերմալ, հիդրոէլեկտրակայանից ստացվող, արևային էներգիա, պինդ կենսաբանական նյութ, էներգիայի ծախս, քամուց ստացված էներգիա, տարածքային ջեռուցում:

Ֆինանսավորմանը վերաբերող տեղեկություններ

Փոխառության նվազագույն չափ	5 միլիոն եվրո, թեև սա որոշ դեպքերում կարող է ավելի պակաս լինել
Փոխառության առավելագույն չափ	250 միլիոն եվրո
Մասնաբաժնի առավելագույն տոկոս	Ընդհանուր կապիտալի 35% մասնավոր-ը, 70%-ը՝ հանրային սեկտորի ծրագրերի համար
Տոկոսադրույք	Հիմնված է շուկայի ներկայիս դրույթի վրա, ինչպիսին է EURIBOR-ը: Հիմնական դրույթից վեր սահմանն ավելացվում է՝ արտացոլելու երկրի ռիսկը, ինչպես նաև ծրագրին հատուկ ռիսկերը:
Ժամկետը	Մինչև 15 տարի
Փոխառության վճարում	Սովորաբար՝ հավասար, կիսամյակային մասնավճարներով:

EBRD-ն ծրագրում ընդգրկված ընկերություններից պահանջում է ապահովագրություն ձեռք բերել սովորաբար ապահովագրման ենթակա վտանգներից: Բանկը չի պահանջում ապահովագրություն քաղաքական վտանգի կամ տեղական արժույթի ոչ փոխարկելիության համար: EBRD-ն սովորաբար իր կողմից ֆինանսավորող ընկերություններից պահանջում է փոխառությունն ապահովել ծրագրի ակտիվներով (օր.՝ գրավ՝ անշարժ կամ շարժական գույքի վրա):

Դիմումի համար անհրաժեշտ տեղեկություններ

Որևէ ծրագրի իրավունակությունը գնահատելու համար EBRD-ն պահանջում է հետևյալ տեղեկությունները. 1. Ծրագրի հակիրճ նկարագրություն՝ մանրամասն ներկայացնելով, թե բանկի ֆինանսավորումն ինչպես է օգտագործվելու, 2. հովանավորի հակիրճ նկարագրություն 3. մանրամասներ արտադրանքի վերաբերյալ, 4. տեղեկություններ շուկայի վերաբերյալ, 5. ծախսերի ճշգրիտ մանրամասնում, 6. լրացուցիչ աղբյուրների նկարագրություն, 7. ընդհանուր գաղափար ծրագրի ակնկալվող ֆինանսական արդյունավետության վերաբերյալ, 8. որևէ բնապահպանական խնդրի համառոտ շարադրում 9. պահանջվող կառավարական արտոնագրերի կամ թույլտվությունների մանրամասներ, հասանելի դրամական հատկացումներ և ներմուծման/արտահանման սահմանափակումներ:

Առավել մանրամասն նկարագրության համար այցելե՛ք՝ <http://www.ebrd.com/pages/workingwithus/projects/apply.shtml>

Ծրագրի օրինակ

Հայաստանում EBRD-ի կողմից համապատասխան ծրագիր մինչ այժմ չի իրականացվել:



Դիմումի գործընթաց

Եթե Դուք հետաքրքրված եք EBRD-ից ֆինանսական աջակցություն ստանալու, լրացրեք առցանց ձևաթուղթը՝ <http://www.ebrd.com/pages/workingwithus/projects/apply/form.shtml> կայքէջում

Կոնտակտային տեղեկություններ

Կոնտակտային անձ՝ Թերի Մակկելիոն («Էներգիայի արդյունավետություն և կլիմայական փոփոխություն», տնօրեն)

Հեռ.՝ +44 20 7338 7478

Ֆաքս՝ +44 20 7338 6942

Կայքէջ՝ www.ebrd.com

2. Ներդրումների եվրոպական բանկ (EIB)

Դոնորի նկարագրություն

Ներդրումների եվրոպական բանկը (EIB) Եվրամիության ֆինանսական կառույցն է: Դրա բաժնետերերը Եվրամիության 27 անդամ երկրներն են: Բանկը Հայաստանում իր առաջին ծրագիրն ստորագրեց 2010թ.-ին: EIB-ի գործողություններն Արևելյան Հարևանության ծրագրերում իրականացվում են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) և Եվրոպական Հանձնաժողովի հետ սերտ համագործակցությամբ: Ներդրումներն Հայաստանում անցնում են Արևելյան Գործընկերության պայմաններով:

Իրավունակ սեկտորներ

Շատ սեկտորներ իրավունակ են ֆինանսավորում ստանալու համար: Ե՛վ հանրային, և՛ մասնավոր սեկտորի ծրագրերն իրավունակ են աջակցություն ստանալու:

Տեխնոլոգիաներ

Էներգետիկ արդյունավետություն (օր.՝ տարածքային ջեռուցում, էներգետիկ ծառայությունների սարքավորումների վերանորոգում), վերականգնվող էներգիա (օր.՝ արևային էներգիա, քամուց ստացվող էներգիա, կենսաբանական նյութ), ջրամատակարարում և կոյուղաջրերի կեղտաջրերի հավաքում և մշակում, կարծր թափոնների հավաքում և մշակում, արդյունաբերական աղտոտման նվազեցման սարքավորումներ, քաղաքային հանրային տրասնպորտ:

Տեղեկություններ ֆինանսավորման վերաբերյալ

Փոխառության նվազագույն չափ	5-15 միլիոն եվրո՝ կախված ծրագրում նախատեսված միջոցառումներից
Փոխառության առավելագույն չափ	200 միլիոն եվրո
Մասնաբաժնի առավելագույն տոկոս	Ծրագրի ծախսերի մինչև 50%-ը
Տոկոսադրույք	EIB-ի փոփոխական փոխարժեքով վարկերը սովորաբար հասանելի են LIBOR -ից ցածր տարածքում՝ ամրագրված փոխառության ողջ ժամկետի համար՝ յուրաքանչյուր ձևակերպման ժամանակ:
Ժամկետը	Մինչև 25 տարի՝ կախված ծրագրի տեսակից
Փոխառության վճարում	Վճարումը սովորաբար կատարվում է կիսամյակային կամ տարեկան հիմքով

EIB-ն տրամադրում է կա՛մ ուղղակի փոխառություններ, կա՛մ ընդհանուր փոխառություններ՝ ֆինանսական միջնորդների միջոցով (բանկեր): EIB-ն Հայաստանում աշխատում է Արևելյան Գործընկերության պայմաններով:

Բանկը կստուգի ծրագիրը նախաձեռնողի սեփական համապարփակ իրագործելիության վերաբերյալ ուսումնասիրությունները և կկատարի ծրագրի որոշակի կողմերի նախնական գնահատում, ներառյալ՝ 1. տեխնիկական 2. բնապահպանական 3. տնտեսական 4. ֆինանսական 5. իրավական:



Ծրագրի օրինակ

Հայաստանում EIB-ի -ի կողմից համապատասխան ծրագիր մինչ այժմ չի իրականացվել:

Ծրագրի չափանիշներ

Ծրագրի աջակիցներից պահանջվում է պարզապես տրամադրել բանկի տնօրինության գործառույթները՝ մանրամասն ներկայացնելով նրանց հիմնական ներդրումների նկարագրությունը՝ ակնկալվող ֆինանսական կարգավորումների հետ միասին:

Առավել մանրամասն նկարագրության համար խնդրում ենք այցելել՝ http://www.eib.org/attachments/application_documents_en.pdf

Դիմումի գործընթաց

Ուղղակիորեն EIB-ից կարելի է անհատական փոխառություններ հայցել 25 միլիոն եվրոյից բարձր ֆինանսավորմամբ ծրագրերի համար: Հավանական ծրագրերի ոլորտը և բազմազանությունը հաշվի առնելով՝ ստանդարտացված փաստաթղթերի պահանջ չի ներկայացվում: EIB-ին ներկայացվող փաստաթղթերի դասավորությունն ու բովանդակությունը ծրագիրը նախաձեռնողի պարտականությունն է: Դիմելու ծևի հետ կապված հետագա մանրամասների համար խնդրում ենք կապվել ծառայությունների տեղեկատու բաժնի հետ (տես՝ կոնտակտային տեղեկությունները)

Կոնտակտային տեղեկություններ

EIB տեղեկատու ծառայություն

Հեռ.՝ (+352) 437922000

Ֆաքս՝ (+352) 437962000

Էլ.հասցե՝ info@eib.org

Կայքէջ՝ www.eib.org



3. Համաշխարհային էկոլոգիական հիմնադրամ (GEF)

Դոնորի նկարագրություն

Համաշխարհային էկոլոգիական հիմնադրամը (GEF) միավորում է 182 անդամ կառավարությունների՝ միջազգային կառույցների և մասնավոր սեկտորի գործընկերությամբ՝ հասցեագրելու համաշխարհային էկոլոգիական խնդիրները: GEF-ն այսօր համաշխարհային էկոլոգիան բարելավելուն ուղղված ծրագրերի ամենամեծ ֆինանսավորողն է: GEF-ի գործընկերությունը բաղկացած է 10 գործակալություններից, ներառյալ EBRD-ն, UNDP-ն, UNEP-ն, UNIDO-ն, ADB-ն և Համաշխարհային բանկը:

Իրավունակ ծրագրերի տեսակներ

Ծրագրերի հայեցակարգերը կարող են ստեղծվել կառավարությունների, համայնքների, մասնավոր սեկտորի կամ քաղաքացիական հասարակության այլ միավորումների կողմից: Գործողությունների հետևյալ տեսակներն իրավունակ են ֆինանսավորման համար՝ բուսական և կենդանական աշխարհի բազմազանություն, կլիմայի փոփոխություն (մեղմացում և հարմարեցում), քիմիական նյութեր, միջազգային ջրային տարածքներ, հողի դեգրադացիա, և անտառի կայուն կառավարում:

Իրավունակ տեխնոլոգիաներ

Այն ամենը, ինչը վերականգնվող էներգիայի տարածքներում նվազեցնում կամ կանխում է ջերմոցներից արտանետված գազը՝ էներգիայի արդյունավետություն, կայուն տրանսպորտ և հողօգտագործման կառավարում, հողօգտագործման փոփոխություն և անտառաբուծություն:

Ֆինանսավորմանը վերաբերող տեղեկություններ

GEF-ն դրամաշնորհներ է տրամադրում տարբեր տեսակի ծրագրերի համար՝ սկսած մի քանի հազարից մինչև մի քանի միլիոն դոլլար արժողությամբ:

Փոխառության նվազագույն չափ	Չկա ճշտգրիտ նվազագույն չափ
Փոխառության առավելագույն չափ	Չկա ճշտգրիտ առավելագույն չափ, ամենամեծ դրամաշնորհը, որը վճարվել է GEF-ի կողմից Հայաստանում ծրագիր իրականացնելու համար, մինչ այժմ կազմել է 3 միլիոն դոլլար: Ամենամեծ ֆինանսավորման չափը Հայաստանում, ներառյալ համաֆինանսավորումը, մինչ այժմ կազմել է 15 միլիոն դոլլար:
Մասնաբաժնի առավելագույն տոկոս	Մանրամասնված չէ
Տոկոսադրույք	Մանրամասնված չէ
Ժամկետ	Մանրամասնված չէ

Դիմումի չափանիշներ

Ի նկատի պետք է ունենալ, որ ծրագրի առաջարկը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին. 1. այն պետք է հասցեագրի GEF-ի մեկ կամի մի քանի ամենակարևոր տարածքներին՝ բարելավելով համաշխարհային էկոլոգիան, 2. համապատասխանում է GEF-ի գործառնության ռազմավարությանը, 3. դիմում է GEF-ին՝ ֆինանսավորման համար՝ միայն համաձայնեցված աստիճանաբար աճող ծախսերի համար այն միջոցների ուղղությամբ, որոնք անհրաժեշտ են բնապահպանական առումով առավելությունների հասնելու համար, 4. այն հանրությանը ներգրավում է ծրագրի ստեղծմանն ու իրականացմանը, 5. այն հավանության է արժանանում այն երկրի/երկրների կառավարության (կառավարությունների) կողմից, որտեղ այն պետք է իրականացվի: Ֆինանսավորման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք կապվել հայաստանյան գրասենյակի պատասխանատուի հետ (տե՛ս կոնտակտային տեղեկությունները):

Ծրագրի օրինակ

2009թ. GEF-ը ֆինանսավորեց սոցիալական և այլ հասարակական օբյեկտների էներգիայի սպառման նվազեցմանն ուղղված ծրագիր: Համաշխարհային էկոլոգիայի տեսանկյունից այս ծրագրի նպատակը ջերմոցներից արտագատվող գազի կրճատումն է՝ էներգիայի արդյունավետության ոլորտում արվող ներդրումների սահմանափակումները հեռացնելու միջոցով:

Դիմումի ընթացակարգը

Մինչ ծրագրի առաջարկի օրինակ կազմելը, դիմողը պետք է կապվի երկրի գործառույթների հետ կապված պատասխանատու անձի հետ (տե՛ս կոնտակտային տեղեկությունները) և հաստատի, որ առաջարկը համապատասխանում է վերը նշված չափանիշների հետ: Եթե ծրագիրն իրավունակ է, ապա ծրագիրը նախաձեռնողը պետք է մշակի ծրագրի նույնականացման ձևաթուղթը (PIF)՝ GEF գործակալության հետ սերտ համագործակցությամբ և ներքին ծրագրի փուլային ընթացակարգին հետևելով: GEF-ին ֆինանսավորման համար ներկայացվող PIF առաջարկներին առաջնահերթություն տալը և ռեսուրսների ծրարների օգտագործումը կառավարվում է երկրի մակարդակով՝ հիմնականում GEF-ի գործառույթների հետ կապված պատասխանատու անձի կողմից: Ծրագրերը սովորաբար մշակվում են «առաջինը եկողին առաջինն են սպասարկում» սկզբունքով:

PIF-ը կարելի է գտնել <http://www.thegef.org/gef/guidelines> հասցեով:

GEF-ի Հայաստանի պատասխանատու

Արամ Հարությունյան

Հեռ.՝ 37 410 52 1099

Ֆաքս՝ 37 410 58 5469

Էլ. փոստ՝ interproject@mnp.am , min_ecology@mnp.am , info@cep.am

Կայքէջ՝ www.thegef.org



4. Եվրասիական Զարգացման բանկ (EDB)

Դոնորի նկարագրություն

Եվրասիական Զարգացման բանկը (EDB) միջազգային ֆինանսական կառույց է, որն հիմնվել է՝ նպաստելու Եվրասիայի տարածաշրջանում տնտեսական աճին և ներառման գործընթացներին: Բանկն ստեղծվել է 2006թ. Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության կողմից: Հայաստանը լիիրավ անդամ է դարձել 2009թ.-ին:

Իրավունակ սեկտորներ

Տրանսպորտ, էներգիա, համայնքային ծառայություններ, բնական ռեսուրսների էներգիայի արդյունավետություն, շրջակա միջավայրի պաշտպանություն և էկոլոգիական վիճակի բարելավում:

Իրավունակ տեխնոլոգիաներ

Տեխնոլոգիաներ, որոնք վերաբերում են էներգիայի արդյունավետությանը, բնական ռեսուրսներին, էներգետիկ սեկտորում էներգիայի արդյունավետ արդիականացմանը

Ֆինանսավորմանը վերաբերող տեղեկություններ

Փոխառության նվազագույն չափ	30 միլիոն դոլար
Փոխառության առավելագույն չափ	150 միլիոն դոլար
Մասնաբաժնի առավելագույն տոկոս	80%
Տոկոսադրույք	Կախված է ծրագրից
Ժամկետ	Առավելագույնը 15 տարի

Ծրագրի հետ կապված բոլոր դրամական փոխանցումները կատարվում են ընտրված միջնորդ բանկի միջոցով՝ հիմք ընդունելով միջնորդության վերաբերյալ ստորագրված համաձայնագիրը:

ստորագրված համաձայնագիրը: Դիմումի համար պահանջվող տեղեկություններ

Ընդհանրապես այս չափանիշները ծրագրերի ստուգման և ֆինանսավորման ընթացքում դիտվում են որպես ընտրման ստանդարտ չափանիշներ՝ 1. Բանկի կողմից իրականացվող ծրագրերը պետք է համապատասխանեն դրա առաքելությանն ու ռազմավարական նպատակներին, 2. Բանկը ֆինանսավորում է ներդրման ծրագրեր, երբ նման ֆինանսավորումը չի կարող ստացվել շուկայից՝ հարմար պայմանների դեպքում, 3. Ծրագրերը ֆինանսավորվում են միջազգային բանկային պրակտիկայի հիմնական սկզբունքներին համապատասխան:

Առավել մանրամասն տեղեկությունների համար այցելեք հետևյալ կայքէջը՝

<http://www.eabr.org/eng/activities/investment/credit-politics/>

Ծրագրերի օրինակներ

Քանի որ Հայաստանը լիիրավ անդամ դարձավ 2009թ.-ին, դեռևս ներդրումներ չեն կատարվել էներգիայի արդյունավետության, վերականգնվող էներգիայի և այլնի ոլորտում:

Դիմումի ընթացակարգ

Բանկն ինքնին հաճախորդի հաշիվներ չի բացում և չի ներգրավվում վճարումների տրամադրման կամ կանխիկ ծառայություններում: Ուստի, ծրագրի հետ կապված բոլոր դրամական փոխանցումները կատարվում են ընտրված միջնորդ բանկի միջոցով՝ հիմք ընդունելով միջնորդության վերաբերյալ ստորագրված համաձայնագիրը: Խնդրում ենք կապվել Մինսկի գրասենյակի հետ՝ առավել ճշտորոշ տեղեկություններ ստանալու համար:

Երևանյան գրասենյակի կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ + 374 (10) 54 01 02

Ֆաքս՝ +374 (10) 54 13 52

Կայքէջ՝ www.eabr.org



5. Ասիական զարգացման բանկ (ADB)

Դոնորի նկարագրություն

Ասիական զարգացման բանկը (ADB) ֆինասավորում է Ասիայի և Խաղաղ Օվկիանոսի տարածաշրջանը՝ աղքատության կրճատման նպատակով: ADB-ն ունի գործունեության մի քանի գլխավոր ոլորտներ, ներառյալ բնապահպանական խնդիրները, ինչպես օրինակ կլիմայական փոփոխություններն են:

Իրավունակ սեկտորներ

Ենթակառուցվածքների ներդրումներ մաքուր, արդյունավետ և կլիմայական տեսանկյունից ճկուն համակարգերում, փոխադրման արդյունավետ և կայուն մեթոդներ, ջրի և սանիտարական հուսալի և մատչելի պայմանների աճող հասանելիություն և կլիմայական տեսանկյունից ճկուն և ապրելու համար պիտանի քաղաքներ: Բանկն աջակցում է համայնքային ինքնուրույն իրավական միավորումներին:

Իրավունակ տեխնոլոգիաներ

Մանրամասնված չէ

Ֆինանսավորմանը վերաբերող տեղեկություններ

Փոխառության նվազագույն չափ	Մանրամասնված չէ
Փոխառության առավելագույն չափ	Մանրամասնված չէ, 100 միլիոնից ավելի
Մասնաբաժնի առավելագույն տոկոս	25%
Տոկոսադրույք	Շուկայի վրա հիմնված
Ժամկետ	Մանրամասնված չէ

Բանկը փոխառության և ֆինանսավորման տեսակին համապատասխան անվտանգության է ձգտում:

Դիմումի համար պահանջվող տեղեկություններ

ADB-ից աջակցություն ստանալու դիմումի համար նախատեսված ստանդարտ ձևաթուղթ չկա: Սակայն, ADB-ն պահանջում է որոշ հիմնական տեղեկություններ՝ ծրագրի գնահատելու համար, ներառյալ՝ 1. գործառնական համառոտ ակնարկ, 2. ծրագրի նկարագրություն, 3. իրագործելիության վերաբերյալ ուսումնասիրություն՝ սահմանելով ծրագրի տեխնիկական, ֆինանսական, տնտեսական և բնապահպանական ու սոցիալական իրագործելիությունը՝ պատրաստված հեղինակավոր խորհրդատուի կամ խորհրդատվական ընկերության կողմից, եթե անհրաժեշտ է, 4. հովանավոր(ներ)ի մասին տվյալներ 5. ծրագրի սեփականության կառուցվածք, 6. ծրագրի իրականացման համակարգումներ, 7. ծրագրի գործառույթներ, 8. շուկան 9. բնապահպանական և սոցիալական ասպեկտներ, 10. ծախսերի նախահաշիվներ, 11. ֆինանսավորման ծրագիր 12. ֆինանսական մոդել 13. ռիսկերի վերլուծություն; 14. թույլտվություններ և արտոնագրեր: Առավել մանրամասն նկարագրության համար խնդրում ենք այցելել ADB-ի կայքէջ՝ հետևյալ հղման միջոցով՝

<http://beta.adb.org/site/private-sector-financing/applying-assistance>

Ծրագրի օրինակ

Հայաստանում EBRD-ի կողմից համապատասխան ծրագրեր մինչ այժմ չեն իրականացվել:

Դիմումի ընթացակարգ

Առավել մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք կապվել ADB-ի հետ՝ իրենց կայքէջում առկա կոնտակտային ձևաթղթի միջոցով:

Կոնտակտային տվյալներ

Հայաստանում քաղաքացիական առաքելություն

Հեռ.՝ +374 10 546370

Ֆաքս՝ +374 10 546374



6. Համաշխարհային բանկ՝ IFC Ենթապետական ֆինանսներ

Դոնորի նկարագրություն

Ենթապետական ֆինանսական բաժինը Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) համատեղ նախաձեռնությունն է: Այն պետություններին, մարզերին, համայնքներին և դրանց ձեռնարկություններին ֆինանսական միջոցներ է տրամադրում, ինչպես նաև մատչելի է դարձնում դրանց մուտքը հիմնական կապիտալի շուկաներ՝ առանց պետական երաշխիքների:

Իրավունակ սեկտորներ

Էներգիայի արդյունավետություն, էներգիա, գազի բաշխում, տարածքային ջեռուցում, ջրի և կեղտաջրերի կառավարում, տրանսպորտ, կարծր թափոններ, այլ կարևոր հանրային ծառայություններ: Համայնքային, մարզային, տարածաշրջանային կամ տեղական կառավարությունները և նրանց միավորումներն իրավունակ են ֆինանսավորման համար:

Իրավունակ տեխնոլոգիաներ

Մանրամասնված չէ

Ֆինանսավորմանը վերաբերող տեղեկություններ

Փոխառության նվազագույն չափ	Մանրամասնված չէ
Փոխառության առավելագույն չափ	Մանրամասնված չէ
Մասնաբաժնի առավելագույն տոկոս	Մանրամասնված չէ
Տոկոսադրույք	Մանրամասնված չէ
Ժամկետ	Մանրամասնված չէ

Ենթապետական ֆինանսական բաժինը գնահատում է ռիսկը՝ համաձայն մի շարք չափանիշների, որոնք ներառվում են իր սեփական հաշվարկային մոդելում: Դրանք ներառում են՝ 1. ֆինանսական (կանխիկի հոսքերի կանխատեսելիություն՝ քննելու պարտքը՝ առանց պետական երաշխիքի, պարտքի գործունակություն, 2. սոցիալ-տնտեսական (ամուր տնտեսական հիմք) 3. ինստիտուցիոնալ (գործառնական արդյունավետություն), 4. կարգավորող (շուկայի կատարելագործում, ապակենտրոնացման աստիճան), 5. զարգացման ազդեցություն (ներդրման կարևորություն, ուժեղ տնտեսական և աղքատության կրճատման օգուտներ):

Դիմումի համար պահանջվող տեղեկություններ

Երբ ֆինանսավորման համար հայց եք ներկայացնում, խնդրում ենք վստահ եղեք, որ ծրագրում ներառել եք հետևյալ հիմնական տեղեկությունները. 1. ներառված միավորման անվանումն ու վայրը, 2. հաստատում, որ միավորումը լիազորված է կոմերցիոն պայմաններով պարտք վերցնել՝ առանց պետական երաշխիքի, 3. ֆինանսական միջոցների/ներդրումների նախատեսված օգտագործման նկարագրություն, 4. ներդրումների ընդհանուր արժեքը, 5. հայցված ֆինանսական աջակցության չափը, 6. ժամկետ՝ առ այն, թե երբ է նախատեսվում սկսել և ավարտել ծրագիրը, 7. արդեն ընդգրկված ցանկացած այլ կողմերի անվանումներ, ինչպես օրինակ՝ ֆինանսական կառույցներ կամ շինարարական ընկերություններ:

Դիմումի ընթացակարգ

Եթե Դուք հետաքրքրված եք ենթապետական ծրագրի համար ֆինանսավորում ստանալ, ապա կարող եք Ձեր հարցերը ներկայացնել էլ. նամակի կամ ֆաքսի միջոցով: Խնդրում ենք չմոռանալ Ձեր նամակի «առարկա» տողում, կամ ֆաքսի ամենավերևում ներառել «ֆինանսավորման խնդրանք» բառերը, ինչպես նաև ներառել Ձեր կոնտակտային տեղեկությունները:

Կոնտակտային տեղեկություններ

Ֆաքս՝ (202) 974-4310

Էլ. հասցե՝ subnationalfinance@ifc.org

Կայքէջ՝ <http://www.ifc.org/subnationalfinance>

7. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID)

Դոնորի նկարագրություն

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունն (USAID) անկախ գործակալություն է, որը տնտեսական, զարգացման և հումանիտար աջակցություն է տրամադրում ողջ աշխարհով մեկ՝ աջակցելու Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության նպատակներին: O P ARMENIA AFSTEMMEN

Իրավունակ սեկտորներ

Շահառուներն են համայնքներն ու ՀԿ-ները

Իրավունակ տեխնոլոգիաներ

Տեխնոլոգիաներ, որոնք վերաբերում են էներգիայի արդյունավետությանը, ածխաթթու գազի կրճատմանը, համայնքային ջեռուցմանը

Ֆինանսավորմանը վերաբերող տեղեկություններ

USAID-ն այլևս պայմանագրային հնարավորությունների համար միջնորդություններ չի ներկայացնում իր կայքէջում: Փոխարենը այս ծանուցումները կհայտնվեն www.grants.gov կայքէջում: Խնդրում ենք այցելել «Grants.gov» կայքէջ և անդամագրվել էլ. փոստին ուղարկվող ծանուցումների համար:

Ծրագրի օրինակ

USAID-ի կողմից Հայաստանում մինչ այժմ համապատասխան ծրագիր չի իրականացվել:

Դիմումի ընթացակարգ

USAID-ի ֆինանսավորմանը դիմելու համար խնդրում են ստուգել հասանելի հայտարարությունները: Այն կարելի է գտնել www.grants.gov կայքէջում:

Կոնտակտային տեղեկություններ USAID/Հայաստան

USAID/Երևանյան առաքելության ղեկավար՝ Ջաթինդեր Չիմա

Հեռ.՝ (3741) 464-700

Ֆաքս՝ (3741) 464-728

Կայքէջ՝ <http://armenia.usaid.gov>

Համաշխարհային կայքէջ՝ www.usaid.gov

USAID-ի դրամաշնորհային հայտարարությունները կարելի է գտնել www.grants.gov կայքէջում

8. Համաշխարհային բանկ

Դոնորի նկարագրություն

Համաշխարհային բանկը ֆինանսավորման և տեխնիկական աջակցության կարևորագույն աղբյուր է ողջ աշխարհի զարգացող երկրների համար: Բանկը բաղկացած է զարգացման երկու կառույցներից, որոնք տնօրինվում են 187 անդամ երկրների կողմից՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (IBRD) և Միջազգային զարգացման ասոցիացիա (IDA): IBRD-ն նպատակ ունի միջին եկամուտով և վարկունակ ավելի աղքատ երկրներում աղքատության կրճատմանը, մինչդեռ IDA -ը կենտրոնանում է աշխարհի ամենաաղքատ երկրներում:



Իրավունակ սեկտորներ

Համարյա բոլոր սեկտորներն իրավունակ են աջակցության համար

Ֆինանսավորմանը վերաբերող տեղեկություններ

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (IBRD) և Միջազգային զարգացման ասոցիացիան (IDA) ներդրումային ծրագրերի համար միջին տարեկան վարկային պարտավորություններ են տրամադրում: Այս ֆինանսական միջոցներն օգտագործվում են հասցեատեր երկրների կողմից՝ ապրանքներ և սարքավորումներ գնելու, քաղաքային աշխատատեղեր կառուցելու և խորհրդատվական ծառայություններ ստանալու, որոնք անհրաժեշտ են այս ծրագրերն իրականացնելու համար: Յուրաքանչյուր ծրագիր կարող է ներառել մի քանի առանձին պայմանագրեր և գործարար հնարավորություններ մատակարարների, կապալառուների և խորհրդատուների համար՝ ողջ աշխարհով մեկ: Երբ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող գործարար հնարավորությունների եք հետամուտ լինում, կարևոր է հասկանալ, որ հասցեատեր երկրում իրականացնող գործակալությունը պատասխանատու է գնումների համար: Բոլոր պայմանագրերը պարտատիրոջ (սովորաբար կառավարության վարչությունը, որը դրա իրականացնող գործակալությունն է) և մատակարարի, կապալառուի կամ խորհրդատուի միջև են: Բանկի դերն է երաշխավորել, որ պարտատիրոջ գործը պատշաճորեն է կատարվել, որ համաձայնեցված գնումների ընթացակարգերը հսկվում են և որ ընդհանուր գործընթացն անցակցվում է արդյունավետ, արդար, թափանցիկ և անկողմնակալ կերպով:

Ծրագրի օրինակ

Միջազգային զարգացման ասոցիացիան Հայաստանի Հանրապետությանը 15 միլիոն ԱՄՆ դոլար վարկ է տրամադրել՝ ֆինանսավորելու Հայաստանի վերականգնող ռեսուրսների և էներգետիկայի հիմնադրամին (R2E2): Նպատակն է բարձրացնել մաքուր, արդյունավետ, անվտանգ և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների օգտագործումը Հայաստանի բազմաբնակարանային շենքերում: Ծրագիրը ներառում է հետևյալ ֆինանսական բաղադրիչները.

- աջակցություն բնակելի շենքերում ջեռուցման վերանորոգման համար, ինչպես նաև դրամաշնորհների հանձնում 10000-ից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին
- ջեռուցման համակարգի վերականգնում 100 քաղաքային դպրոցում:

Ծրագիրը կարող է աջակցություն տրամադրել ենթափոխառության ծրագրերի նախապատրաստման համար:

Դիմումի ընթացակարգ

Հավելյալ տեղեկությունների համար կապվել տեղական գրասենյակի հետ

Կոնտակտային տեղեկություններ

Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակ

Հեռ.՝ (374-10) 52-48-84

Ֆաքս՝ (374-10) 52-17-87

Արտաքին հարաբերությունների պատասխանատու՝ Վիգեն Սարգսյան

Էլ. հասցե՝ vsargsyan@worldbank.org

R2E2 հիմնադրամի տնօրեն՝ Քամարա Բաբայան

Էլ. հասցե՝ director@r2e2.am



9. KfW

Դոնորի նկարագրություն

KfW-ն Գերմանիայի առաջատար զարգացման բանկն է և KfW Bankengruppe-ի անքակտելի մասը: Մեր հիմնական հաճախորդները Գերմանիայի նախարարություններն են, բայց եվրոպական Հանձնաժողովը և այլ երկրների կառավարությունները ևս պատվիրում են մեզ իրականացնել իրենց զարգացման համագործակցության ծրագրերը: Գերմանիայի ֆինանսական համագործակցությունը (FC) Հայաստանի հետ սկսվեց 1995թ.-ին և իրականացվում է KfW Entwicklungsbank-ի միջոցով՝ Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության անունից (BMZ): 2001թ.-ից սկսած Հայաստանի հետ երկկողմ համագործակցությունն արդեն համալրվել է BMZ-ի Կովկասյան տարածաշրջանի նախաձեռնության (CI) կողմից:

Իրավունակ սեկտորներ

Այսօր KfW Entwicklungsbank-ն հիմնականում ֆինանսական ներդրումներ է իրականացնում տարածաշրջանային կարևորության էներգիայի փոխակերպման ոլորտում, ինչպես նաև ներդրումներ վերականգնվող էներգիայի ոլորտում:

Ֆինանսավորմանը վերաբերող տեղեկություններ

Բանկը «մեկ քայլ» ֆինանսավորման աղբյուր է Ձեր ծրագրի համար: Որոշ դեպքերում KfW փոխառությունը կարող է ծածկել Ձեր ֆինանսական կարիքների միայն մի մասը:

Ծրագրի օրինակ

2006թ. հոկտեմբերին KfW-ն սկսեց 6 միլիոն եվրո արժողությամբ ծրագիր՝ աջակցելու մասնավոր էլեկտրակայանի գործարկողներին և բանկերին՝ ստեղծելու բանկի կողմից ընդունելի ծրագրեր 13 հին հիդրոէլեկտրակայանների ամբողջովին վերանորոգման համար: 2010թ. ձեռնարկվեց երկրորդ փուլը:

Դիմումի ընթացակարգ

Դիմումը միշտ պետք է ներկայացվի մինչև ծրագրի սկիզբը (օրինակ մինչև առաջին պարտավորեցնող պայմանագիրը/ հրամանը կամ գնման պայմանագիրը կնքելը), որովհետև պարտքի վերականգնումներ կամ հետգործարքային ֆինանսավորում հնարավոր չէ կատարել: Հավելյալ տեղեկությունների համար կապվել տեղական գրասենյակի հետ:

Կոնտակտային տեղեկություններ

KfW Երևանի գրասենյակ, Բաղրամյան փողոց 4/1, 0019 Երևան

Հեռ.՝ +374 93 51 79 87

Էլ. հասցե՝ bella.Andriasyan@kfw.de

Կայքէջ՝ http://www.kfw-entwicklungsbank.de/ebank/EN_Home/Countries_and_Programmes/Europe/Armenia



10. Օգտակար հղումներ և ազգային հիմնադրամներ

1. INOGATE

INOGATE ծրագիրը էներգիայի համագործակցության միջազգային ծրագիր է Եվրամիության և Գործընկեր երկրների միջև, ներառյալ Հայաստանը: Նրանք համաձայնել են միասին աշխատել՝ հասնելու չորս հիմնական նպատակների՝ 1. միացնել էներգիայի շուկաները՝ ԵՄ ներքին էներգիայի շուկայի սկզբունքների հիմքով՝ հաշվի առնելով ներառված երկրների առանձնահատկությունները, հզորացնել էներգիայի անվտանգությունը՝ հասցեագրելով էներգիայի արտահանման/ներկրման/մատակարարման ձևափոխման, 2. էներգիայի փոխանցման և էներգիայի պահանջարկի խնդիրները, 3. աջակցել կայուն էներգիայի զարգացմանը, ներառյալ էներգիայի արդյունավետության, վերականգնվող էներգիայի զարգացումը և պահանջող կողմի կառավարումը, 4. սովորական և տարածաշրջանային հետաքրքրության էներգիայի ծրագրերում ներդրումները գրավիչ դարձնել:

Կայքէջ՝ www.inogate.org

2. ENPI

Եվրոպական Հարևանության և Գործընկերության փաստաթուղթը (European Neighbourhood and Partnership Instrument (ENPI)) ֆինանսական փաստաթուղթ է, որն աջակցում է ENP-ին (Եվրոպական Հարևանության քաղաքականությանը (European Neighbourhood Policy))՝ աջակցման կոնկրետ գործողություններով: ENP-ն լայն քաղաքական ուղղվածություն է, որը նպատակ ունի հզորացնելու Եվրոպական հարևանության բարգավաճումը, կայունությունը և անվտանգությունը, որպեսզի խուսափի ընդլայնված ԵՄ-ի և իր ուղղակի հարևանների միջև ցանկացած զատող սահմաններից:

Կայքէջ՝ http://ec.europa.eu/world/enp/index_en.htm

3. GTZ - GIZ

GTZ - GIZ-ն գործում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության և այլ պատվիրատուների անունից, աջակցում է գործընկեր երկրներին՝ իրականացնելու կլիմայի փոփոխությանը վերաբերող շրջանակային կոնվենցիան, որը նպատակ ունի նվազեցնել ջերմոցներից արտանետված գազերը և հարմարվելու կլիմայական փոփոխությունների հետևանքներին: Բացի այդ, GTZ-ն իրականացնում է կլիմայական փոփոխությունների ուղեհիշներ՝ գործընկեր երկրներում մի շարք գործնական միջոցառումներ իրականացնելով:

Կայքէջ՝ www.giz.de

4. Հայաստանի վերականգնվող էներգիա

«Աջակցել Հայաստանի էներգետիկ քաղաքականությանը» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից և նպատակ ունի աջակցություն տրամադրել Հայաստանի կառավարությանը՝ իրականացնելու իր էներգետիկ քաղաքականությունը՝ նպատակ ունենալով շահագործումից հանել Մեծամորի ԱԷԿ-ը և ավելացնել վերականգնվող էներգիայի օգտագործումը:

Կայքէջ՝ <http://www.renewableenergyarmenia.am/>

5. REEEP

Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետության գործընկերությունը (REEEP) շահույթ չհետապնդող, մասնագիտական փոփոխության գործակալություն է, որը նպատակ ունի խթանել շուկան՝ վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետության տեսանկյունից՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով զարգացող շուկաների և երկրների վրա:

Կայքէջ՝ <http://www.reeep.org/>



6. Ազգային հիմնադրամներ

Արևելյան գործընկերության և Կենտրոնական Ասիայի երկրների մեծ մասը կանոնավոր աջակցման կառուցվածքների և հիմնադրամների ստեղծման փուլում են: Կայուն էներգիայի գործողությունների ծրագրերը (SEAPs) դեռևս լայնորեն չեն ընկալվում որպես տեղական կլիմայի քաղաքականության զարգացման գործիք, հետևաբար հստակ և շարունակական բազմամյա պետական ծրագրեր չկան այս կոնկրետ գործի համար: Սակայն, գոյություն ունեցող աջակցման մեխանիզմները, որոնք հասանելի են էներգիայի խնայողության պետական ծրագրերում և արագորեն զարգանում են, կարող են բաղադրիչներ ներառել, որոնք կարող են օգտագործվել՝ աջակցելու SEAP-ի զարգացմանը, թեև հասանելիության և օգտվելու հնարավորության ընթացակարգերը կարող են տարեց տարի փոփոխվել: Այդ ժամանակ ստորագրող կողմերին, որոնք պետական հիմնադրամներից ֆինանսական աջակցություն են փնտրում, խորհուրդ է տրվում հարցում կատարել համապատասխան պետական վերակառուցման, տարածաշրջանային զարգացման, էներգիայի և շրջակա միջավայրի հարցերով նախարարություններից, ինչպես նաև մարզային և տարածաշրջանային վարչություններից և էկոլոգիական հիմնադրամներից, որոնք հնարավոր է հասանելի դրամական միջոցներ ունենան:



Այս փաստաթղթի բովանդակության ողջ պատասխանատվությունը կրում է Քաղաքապետերի Դաշնագրի Արևելյան գրասենյակը: Այն անպայմանորեն չի արտահայտում Եվրամիության տեսակետը: Եվրոպական Հանձնաժողովը պատասխանատու չէ որևէ օգտագործման համար, որը կարող է կատարվել այստեղ պարունակվող տեղեկատվության հետ կամ որևէ սխալ, որը կարող է մնալ տեքստերում: անկախ դրանք պատրաստելու ժամանակ դրսևորած հոգատարությունից: Քաղաքապետերի Դաշնագրի Արևելյան գրասենյակը կազմավորվել է Եվրոպական Հանձնաժողովի DG DEVCO-ի ֆինանսական աջակցությամբ: Այն ղեկավարվում է «Energy Cities»-ի կողմից, ինչպես նաև ներառում է «Climate Alliance»-ը, «Energy Efficient Cities of Ukraine»-ը, NL գործակալությունը և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը: